ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՏԻ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Ազատության կատեգորիան մարքս-լենինյան փիլիսոփայության այն հիմնական կատեգորիաներից է, որի դիալեկտիկա-մատերիալիստական լուծումից է կախված մարդու պրոբլեմի գիտական վերլուծությունը։ Սակայն այդ հասկացության շուրջը գոյություն ունեն մի շարք տարաձայնություններ։ Մինչև մարքսիստական փիլիսոփայության հանդես գալը «...ազատությունը փիլիսոփաների կողմից սահմանվել է հիմնականում երկակիորեն։ Մի կողմից՝ այն սահմանվել է որպես իշխանություն, տիրապետություն անհատին շրջապատող հարաբերությունների և պարագաների վրա. այսպես այն սահմանվել է բոլոր մատերիալիստների կողմից։ Մյուս կողմից՝ այն դիտվել է որպես ինքնորոշում, իրական աշխարհից խուսափում, որպես ոգու միայն կեղծ ազատություն. այսպես այն սահմանվել է բոլոր իդեալիստների (հատկապես գերմանական) կողմից»[1]։

Ի տարբերություն նախորդ մտածողների, մարքսիզմի հիմնադիրները մշակեցին ազատության կոնկրետ պատմական տեսությունը, այն համարելով կեցության յուրահատուկ մարդկային եղանակ. «Մարդկայնորեն լավ կարող է լինել այն, ինչ հանդիսանում է ազատության իրականացումը»[2]։

Եթե նախորդ փիլիսոփաները ելնում էին հիմնականում ազատության իմացաբանական ըմբռնումից, ապա մարքսիզմի հիմնադիրները նրանում հայտնաբերեցին նաև պրակտիկ ասպեկտ, որը և, ըստ նրանց, հիմնականն է ազատության գիտական ըմբռնման համար։ Այս առումով չի կարելի համաձայնվել մինչև վերջերս տարածված այն կարծիքի հետ, որ իբր թե, ազատության մարքսիստական սահմանումը ամբողջովին և վերջնականապես տրված է Ֆ. Էնգելսի հայտնի ձևակերպման մեջ, որտեղ նա ազատությունը բնութագրում է որպես «ճանաչված անհրաժեշտություն»։ Մինչդեռ Ֆ. Էնգելսը այս ձևակերպման մեջ վերլուծում է ազատության հեգելյան ըմբռնումը՝ իր ուշադրությունը կենտրոնացնելով ազատության և անհրաժեշտության վրա, միաժամանակ առանձնացնելով այդ փոխհարաբերության հեգելյան ըմբռնման առավելությունը՝ ազատության, որպես կամայականության և արտաքին աշխարհից բացարձակ անկախության, սուբյեկտիվիստական և մետաֆիզիկական ըմբռնումների նկատմամբ։

Ազատությունը մարքսիստական մեկնաբանությամբ ոչ միայն անհրաժեշտության ճանաչում է, այլ նաև մարդկանց պրակտիկ գործունեության կարևորագույն տարր։ Ազատության սուբյեկտը ոչ միայն ճանաչում, այլ գործում է ըստ այդ իմացության։ Դրա համար էլ «... կամքի ազատությունը ոչ

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 292 (примечание).

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 1, стр. 59.

այլ ինչ է, բայց եթե բանիմացաբար որոշումներ կայացնելու ընդունակություն»[3]։ Այդ ամենը նշանակում է, որ շնորհիվ այդ ընդունակության անհատը դառնում է բնության լիակատար տերն ու տնօրենը և որ «...հետևաբար, ազատությունը, բնության անհրաժեշտությունների (Naturnotwendigkeiten) իմացության վրա հիմնված իշխանությունն է հենց մեր վրա և արտաքին բնության վրա»[4]։

Այսպիսով, միայն անհրաժեշտության ճանաչումը դեռևս չի կարող համարվել ազատության լիակատար դրսևորում։ Ֆ. Էնգելսը գրում է. «Հասարակական ուժերը հասարակության իշխանությանը ենթարկելու համար բավական չէ լոկ իմացությունը, թեկուզ այն նույնիսկ ավելի լայն ու խոր լինի, քան բուրժուական քաղաքատնտեսության իմացությունը։ Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է հասարակական գործողություն»[5]: Ազատության մարքսիստական մեկնաբանության մեջ իմացության և պրակտիկ գործունեության միասնության անհրաժեշտության մասին նշել է նաև Վ. Ի. Լենինը իր «Փիլիսոփայական տետրեր»-ում։

Մշակելով Հեգելի աշխատությունները, նա գրում է. «Շատ լավն է. Էնցիկլոպեդիայի 225. §-ը, որտեղ «իմացությունը» («տեսական») և «կամքը», «պրակտիկ գործունեությունը» ներկայացված են որպես և՛ սուբյեկտիվության, և՛ «օբյեկտիվության», «միակողմանիության» ոչնչացման երկու կողմեր, երկու մեթոդներ, երկու միջոցներ»[6]։

Ըստ վերջին ժամանակներս մեր փիլիսոփայական գրականության մեջ լայն տարածում գտած սահմանման՝ ազատությունը այնպիսի գործունեություն է, որն իրականացվում է առանց արտաքին հարկադրանքի և շնորհիվ այդ գործունեության՝ ներքնապես հատուկ անհրաժեշտություն է։ «Ազատությունը,— գրում է Վ. Ե. Դավիդովիչը,— կարող է բնութագրվել որպես հասարակական մարդու նպատակասլաց, գործուն ակտիվություն, որն իրականացվում է օբյեկտիվ անհրաժեշտության ճանաչման հիման վրա»[7]։ Կամ՝ «...իսկական ազատությունը,— է. Վ. Իլենկովի կարծիքով,— կայանում է արտաքին պարագաների ուժը և ճնշումը հաղթահարող գործողություններում»[8]։ «Ազատությունը,— նշում է Վ. Տուգարինովը,— մարդու համար ոչ թե ըստ արտաքին հարկադրանքի, այլ իր սեփական կամքի համաձայն մտածելու և գործելու հնարավորություն է»[9]։ Հենց ազատության վրա հիմնված գործունեությունն է, որ մարդու ցեղային էության դրսևորումն է. «Ազատությունը,—գրում է Կ. Մարքսը,—հանդիսանում է ...ողջ հոգևոր կեցության ցեղային էությունը»[10]։ Ուստի, միայն գործունեության տեսանկյունից մեկնաբանված ազատությունը, մեր կարծիքով, կարող է համարվել մարդկային իրական գոյության պայման և եղանակ։

---

3 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1967, էջ 152։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 427 (ընդգծումը մերն է—Հ. Հ.)։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 255։

7 В. Е. Давидович, Проблемы человеческой свободы, Львов, 1967, стр. 10.

8 Э. В. Ильенков, Об эстетической природе фантазии («Вопросы эстетики» вып. 6, М., 1969, стр. 64).

9 В. П. Тугаринов, Общество и личность, М., 1955, стр. 61.

10 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. I, стр. 59.

Այսպիսով, ազատությունը ենթադրում է, մի կողմից, արտաքին աշխարհի ճանաչում, մյուս կողմից՝ դրա պրակտիկ իրականացում։ Այս երկու պրոցեսները հանդես են գալիս սերտ միասնության մեջ, քանի որ ճանաչողությունն անհնար է առանց պրակտիկայի, մարդկանց նպատակների և պահանջմունքների, իսկ այդ պահանջմունքների և նպատակների ձևավորման կարևորագույն պայմանը իմացությունն է։ Ճանաչողության պրոցեսում ոչ միայն արտաքին առարկաներն ու երևույթներն են ձևափոխվում մարդկանց պահանջմունքների և նպատակների համապատասխան և ստանում «մարդկային» իմաստ, այլև օբյեկտիվորեն դրսևորվում է մարդու էությունը։ Հենց այդ «ինքնաիրականացումը, սուբյեկտի առարկայական մարմնացումը, ըստ Կ. Մարքսի, հանդիսանում է իսկական ազատությունը, որի գործուն դրսևորումը աշխատանքն է»[11]։

Իմացությունը երբեք չի իրականանում մարդուց դուրս և միշտ ունի մարդկային բնույթ։ Իմացությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտաքին աշխարհի վերափոխում՝ մարդկանց գործունեության միջոցով. «...աշխարհը չի բավարարում մարդուն և մարդը իր գործողությամբ որոշում է փոխել այն»[12],— գրում է Վ. Ի. Լենինը։ Իսկ մարդկանց գործողությունները արտաքին իրականության վերափոխման բնագավառում պայմանավորված են պրակտիկայով, մարդկային նպատակներով և պահանջմունքներով։ Չի կարելի չհամաձայնվել այն կարծիքի հետ, որ «Իմացության պրոցեսը իրականության արտացոլումն է, բայց ոչ թե պասսիվ, այլ սերտորեն կապված կանխատեսման, նպատակների առաջադրման հետ, այսինքն՝ հանդիսանում է մարդկանց ակտիվ գործունեության ձև»[13]։ Այս տեսակետից իմացությունը միշտ էլ իրականության ակտիվ, ստեղծագործական, գործուն արտացոլումն է, որը ենթադրում է անհատի հարաբերական ազատությունը արտաքին պայմանավորվածությունից։

Այսպիսով, իմացությունը հանդես է գալիս որպես ազատ գործունեություն, որպես արտաքին առարկաները և երևույթները մարդկային որոշակի նպատակներին և պահանջմունքներին ենթարկելու պրոցես։ Այն հանգամանքը, որ արտաքին առարկաները դառնում են իմացության օբյեկտ, վկայում է այն մասին, որ այդ առարկաներն արդեն ստացել են որոշակի նշանակություն և իմաստ մարդկանց համար, որ դրանք արդեն պատկանում են «անհատի աշխարհին»։ Դրա համար էլ մարդկային գործունեությունից անկախ իմացությունը կորցնում է իր ամենակարևոր հատկանիշներից մեկը, ակտիվությունը, որն անհնար է առանց ազատության։ Այս ամենը նշանակում է, որ իմացությունը միշտ էլ կապված է մարդկանց պրակտիկ գործունեության հետ։ Դեռ ավելին, այն հանդես է գալիս որպես սուբյեկտի գործունեություն՝ ուղղված օբյեկտի վերափոխմանը, այնպիսի գործունեություն, որի հիմքը նյութական, պրակտիկ ոլորտն է։ Այսպիսով, «Իրականության իմացությունը գոյություն ունի ոչ թե նյութական փոխհարաբերությունից դուրս, այլ որպես սուբյեկտի և օբյեկտի գործունեության կողմ»[14]։ Ուստի, իմացության պրո-

---

[11] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս. Соч., т. 46, ч. II, стр. 109—110 (ընդգծումը մերն է—Հ. Հ.)։

[12] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 261։

[13] А. М. Коршунов, Теория отражения и творчество, М., 1971, стр. 6.

[14] П. В. Копнин, Гносеологические и логические основы науки, М., 1974, стр. 243.

ցևսն անհասկանալի կդառնա, եթե այն դիտվի մարդուց դուրս, քանի որ «կեցության և նրա իմացության պրոբլեմը կապված է մարդու՝ որպես գործողության և իմացության սուբյեկտի, պրոբլեմի հետ, իսկ մարդու պրոբլեմն իր հերթին անխզելիորեն կապված է կեցության և գոյի ընդհանուր պրոբլեմի հետ»[15]։

Միայն այսպես մեկնաբանված իմացությունը, մեր կարծիքով, կարող է հանդիսանալ ազատության նախադրյալ։ Խնդիրն այն է, որ իմացության պրոցեսն իրենից ներկայացնում է մարդու կողմից աշխարհի յուրացման պրոցես. որտեղ նյութական աշխարհը ստանում է «սուբյեկտիվ» իմաստ, այսինքն՝ վերափոխվում է ճանաչող սուբյեկտի նպատակներին համապատասխան և դառնում է անհատի միջավայրը։ Միաժամանակ այդ պրոցեսում առարկայական գործունեության միջոցով մարդու էությունը ստանում է օբյեկտիվ իմաստ և առարկայանում է։ Վերափոխելով բնությունը, անհատը միաժամանակ, Կ. Մարքսի խոսքերով ասած, «իրականացնում է իր գիտակցական նպատակը», ինքն իրեն։ Իմացության ամեն մի ակտ կապված է որոշակի նպատակների առաջադրման և դրանց իրականացման հետ։

Այս տեսակետից գործունեության վրա հիմնված ամեն մի իմացաբանական ակտ մի կողմից հանդիսանում է արտաքին իրականության վերափոխում և «ստեղծում», մյուս կողմից՝ մարդու ինքնահաստատում, նրա էության դրսևորում, քանի որ «առարկայական աշխարհի պրակտիկ ստեղծումը, անօրգանական բնության վերամշակումը,— գրում է Կ. Մարքսը,— մարդու որպես ցեղային էության ինքնահաստատումն է»[16]։

Ազատության պրոբլեմը հանդես է գալիս որպես մարդկային էության դրսևորման, հայտնաբերման պրոբլեմ։ Ազատությունը հենց այդ էության դրսևորման միջոցն է, եղանակը։ Ինչպես իրավացիորեն նշում է Է. Բարտենևը, «լինել ազատ, նշանակում է ինքնուրույնաբար և հնարավորին չափ լրիվ գործունեության մեջ արտահայտել մարդկային էությունը»[17]։

Գործունեությունը, իր հերթին, մարդու արտաքին աշխարհի հետ ունեցած կապի այնպիսի դրսևորում է, որտեղ արտաքին աշխարհը ազդելով մարդու վրա, դառնում է սուբյեկտի սեփականությունը, իսկ մարդու ներքին աշխարհը ստանում է օբյեկտիվ բնույթ և դրանով իսկ իրականացվում է օբյեկտիվ աշխարհում։ Իր գործունեության շնորհիվ անհատը ստեղծում է որոշակի իմաստ և նշանակություն ունեցող առարկաների, երևույթների բնագավառ, որը կախված չէ սուբյեկտի կամքից և ցանկություններից։ Այդ բնագավառը մարդուն շրջապատող միջավայրն է, որը թեև ստեղծվում է մարդկային գործունեության շնորհիվ, միաժամանակ պայմանավորում է այդ գործունեությունը։ Նախընտրելով այս կամ այն նպատակը, անհատը միաժամանակ ընտրում է իր էությունը, իրականացնում ինքն իրեն. բայց այդ նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու «ներքին աշխարհի» արտահայտություն, որը միաժամանակ շրջապատող միջավայրի արտացոլումն է։ Հենց այդ ընտրության մեջ էլ դրսևորվում է ազատությունը։ Սակայն ամեն ընտրություն չէ, որ կարելի է համարել մարդու էության հայտնաբերում, անհատի «ստեղծում»,

---

[15] С. Л. Рубинштейн, Проблемы общей психологии, М., 1973, стр. 230.
[16] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, стр. 565.
[17] Э. В. Бартенев, Тайна бытия человеческого, М., 1969, стр. 71.

քանի որ ընտրություն է կատարվում նաև՝ ելնելով բնական անհրաժեշտությունից, ըստ հարկադրանքի։ Միայն ազատ ընտրությունը, որն անմիջականորեն ոչնչով չի պայմանավորված և կատարվում է ինքնաբուխ, կարող է «ստեղծել» մարդուն։ Սակայն դա չի նշանակում, որ ազատ գործունեությունը ոչնչով պայմանավորված չէ։ Արտաքին պայմանների նկատմամբ այն երկրորդական է, կախված նրանցից, իսկ մյուս կողմից՝ ազատ գործունեության շնորհիվ անհատը դրսևորում է ինքն իրեն։ Այս տեսակետից ազատության և գործունեության փոխհարաբերության դիտական ըմբռնումը հանգում է նրան, որ այդ հարաբերության կիզակետում հանդես է դալիս անհատը որպես հասարակական էակ՝ իր սեփական պայմանների և հարաբերությունների հետ։

Ահա թե ինչու ազատության և գործունեության փոխհարաբերության պրոբլեմը սերտ կերպով կապված է անհատի կողմից «երկրորդ բնության» ստեղծման հետ, որը հանդես է դալիս որպես մարդու կեցության իսկական ոլորտ։

Ազատության այս ըմբռնումը միանգամայն աղավաղված ձևով է դրսևորվում ժամանակակից բուրժուական փիլիսոփայության մեջ։ Այս առումով հատկանշական է ազատ ընտրության էկզիստենցիալիստական մեկնաբանությունը։ Իրավացիորեն նշելով, որ մարդու էության ըմբռնումը ենթադրում է ազատ ընտրություն, որ այդ էությունը լիովին չի ամփոփվում շրջապատող իրականության մեջ, այլ նշանակում է այդ իրականության «հաղթահարումը», նրանից «դուրս գալը», էկզիստենցիալիզմի ներկայացուցիչները աղավաղում են ազատության բուն էությունը և առաջարկում են սուբյեկտիվ իդեալիստական լուծման մի շարք տարբերակներ։ Ազատություն և գործունեություն փոխհարաբերության էկզիստենցիալիստական մեկնաբանման հիմքում ընկած է անհատի էության և նրա գոյության դիալեկտիկական փոխհարաբերության ոչ ճիշտ ըմբռնումը։ Ըստ էկզիստենցիալիզմի, գոյությունը, որը ոչ թե էմպիրիկ բնույթ ունի, այլ հանդիսանում է ապրիորի, տրանսցենդենտալ համակարգերի, կառուցվածքների ամբողջություն, նախորդում է մարդու էությանը։ Գոյությունը ոչ թե ռեալ իրականություն է, այլ հնարավորություն, մարդու պոտենցիալ էությունը։ Անհատը սկզբում ոչինչ է. հանդիսանալով գործունեության արդյունք, նա միշտ ձգտում է ձեռք բերել իր էությունը, որը դտնվում է իրենից դուրս։

Ռեալ իրականության մեջ, սոցիալական միջավայրում անհատը չի կարող ըմբռնել իր էությունը, քանի որ ըստ էկզիստենցիալիստների, որպես սոցիալական «ես», ես չեմ նույնանում ինքս ինձ հետ։ Մարդը պայմանավորված չէ իր էությամբ, վերջինս միայն հնարավորություն է և դառնում է իրականություն միայն գոյության մեջ։ Իսկ գոյությունն իր հերթին չի կարող դիտվել որպես պատմական պրոցես, որպես մարդկանց ռեալ պրակտիկ գործունեություն։ Դրա համար էլ անհատն էկզիստենցիալիզմի մեջ դառնում է «իսկական» ոչ թե կոնկրետ-պատմական պայմաններում, այլ հակառակը՝ այդ պայմաններին դիմադրելու, դրանցից դուրս գալու շնորհիվ։

Ըստ Կ. Յասպերսի իսկական գործունեությունը պետք է ազատ լինի արտաքին պատճառական կապերից, ընդհանրությունից և «կոլեկտիվ կյանքից»։ Դրա համար անհրաժեշտ է, որ անհատն ամփոփվի ինքն իր ներքնաշխարհում, իր «ես»-ի մեջ։ Անհատն իսկական անհատ է դառնում ոչ թե առօրյա

կյանքում, հասարակության մեջ, այլ մեկուսացված վիճակում՝ իր ենթագիտակցական աշխարհում։ Սա շատ ավելի ցայտուն կերպով դրսևորված է նրա «սահմանային իրադրություններին» մասին ուսմունքում։ Կ. Յասպերսի կարծիքով, մարդուն հատուկ են այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են երկյուղը, ճակատագիրը, մահը։ Միայն այն դեպքում, երբ անհատը կանգնում է դեմ-հանդիման այդ զգացմունքներին, նա գիտակցում է իր էությունը, իր ազատությունը, քանի որ այդ զգացմունքներն ունեն ոչ թե «մասսայական» «տիպային» (Massentypus) բնույթ, այլ բխում են անհատի ինքնուրույնությունից, ներքնաշխարհից։ Դրա համար պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրադրություն, որտեղ անհատը որպես ազատ և եզակի էակ պարզապես ապրում է։ Նա տարերայնորեն ընդգրկված, «նետված» է պատմության մեջ, այլ ոչ թե նրա կողմից նախագծված, ստեղծված։ Կարևորը, ըստ Մ. Յասպերսի, ներքին համոզվածությունն է, որն առաջնային է ամեն մի պատմական գործունեության նկատմամբ։ Մյուս կողմից՝ լինել առարկայական աշխարհի ստեղծող, գործունեության սուբյեկտ, էկզիստենցիալիզմի համար նշանակում է ունենալ նեգատիվ սահմանում։ Մարդը դառնում է անհատ, գործունեության սուբյեկտ այն ժամանակ, երբ նա չի առնչվում արտաքին, առօրյա աշխարհի հետ։

Անհատի էությունը, ըստ էկզիստենցիալիստների, դառնում է հնարավոր միայն էկզիստենցիայի շնորհիվ, որը կախված չէ բնական և սոցիալական միջավայրից, օբյեկտիվ—արտաքին դետերմինացիայից։ Դեռ ավելին, արտաքին պայմաններում, սոցիալական միջավայրում անհատը կորցնում է իր էությունը, իր «ինքնությունը» և դառնում է անդեմ։ Հետևաբար, մարդն իր էությունը ստեղծում է այն ժամանակ, երբ իրեն առանձնացնում է արտաքին միջավայրից և ձգտում ինչ-որ իդեալական, ռեալ իրականության մեջ գոյություն չունեցող ծրագրի իրականացման։ Հենց այդ ծրագիրն էլ էկզիստենցիալիստների մոտ ստանում է տրանսցենդենցիա անվանումը, որի շնորհիվ մարդու լինելությունը վեր է ածվում տրանսցենդենցիայի որոնման։ Տրանսցենդենցիայի շնորհիվ կատարվում է անհատի ինքնածրագրավորումը, որն ըմբռնվում է ոչ թե հասարակության մեջ մարդու ձևավորման իմաստով, այլ տրանսցենդենցիայի ընտրությամբ։ Հենց այդ ընտրության հետ էլ կապված է ազատության պրոբլեմը։ Ազատությունը, ըստ էկզիստենցիալիստների. մարդկային էության մշտական ընտրությունն է. «Ազատությունը,— ասում է Կ. Յասպերսը,— իմ ինքնության ընտրությունն է, քանի որ եթե ես կամ, նշանակում է՝ ես կատարում եմ ընտրություն, եթե չկամ, ես չեմ կարող ընտրել»[18]։ Իր ընտրության մեջ անհատը չի կարող հիմնվել արտաքին իրականության վրա, քանի որ նրանում չկա մարդու էությունը։ Դրա համար էլ անհատն իր ընտրությունը իրականացնում է անհատական ձևով և բացարձակապես ազատ է ընտրության մեջ։

Մատերիական աշխարհը, ըստ Ժ. Սարտրի, հանդես է գալիս որպես մարդու նկատմամբ սպառնալիք, նրա գործունեության խոչընդոտ, մարդկային կեցության սահման։ «Անհատը լքված է, անօգնական, քանի որ ո՛չ իր մեջ, ո՛չ էլ արտաքին աշխարհում հնարավոր չէ հիմնվել ինչ-որ բանի վրա...

[18] K. Jaspers, Philosophie, Bd. II, Berlin, 1932, S. 181.

և որ չկա ուրիշ, մարդուց բացի օրենսդիր, և որ նա պետք է որոշի իր ճակատագիրը լրիվ մենակության մեջ»[19]։

Ազատությունը դա այն պայմանների, ուղիների ամբողջությունն է, որը հնարավոր է դարձնում մարդու էությունը։ Ըստ էկզիստենցիալիզմի «մարդը լոկ մտադրություն է և ապրում է իր սեփական կյանքով... նա դառնում է այն, ինչ նախանշված է լինելու»[20]։ Դրա համար էլ ազատությունը, որպես մարդու էության լինելիության միջոց, հնարավոր չէ առանց գործունեության։ Քանի որ մարդկային գործունեությունը պայմանավորված չէ արտաքին պայմաններով, ուստի այն միանգամայն «ազատ» գործունեություն է և ենթակա չէ ճանաչման։ Ազատությունը գործունեության պայմանն է և նրա խթանիչ ուժը։ Ազատությունը սերտորեն կապված է մարդու էության հետ և ստիպում է մարդուն ստեղծել ինքն իրեն՝ լինելու, գոյություն ունենալու փոխարեն։ Չկա ուրիշ կանխորոշում, նախնական պայմանավորվածություն, «մարդը ազատ է, մարդը ինքը ազատություն է»։ Ահա էկզիստենցիալիզմի վերջնական եզրակացությունը։

Այսպիսով, էկզիստենցիալիզմի փիլիսոփայության մեջ որպես հակադրություններ հանդես են գալիս, մի կողմից, նյութական, էմպիրիկ աշխարհը, որն իր մեջ չի պարունակում գործունեության ոչ մի ներքին հնարավորություն և պայման, մյուս կողմից՝ ստեղծագործ, գիտակցական, անհատական սուբյեկտը, որն ազատ և ինքնուրույն կերպով ստեղծում է նոր իրականություն՝ ինքը գտնվելով դրանից դուրս։ Ստեղծագործական սուբյեկտն իր գործունեության մեջ բացարձակապես ազատ է, իսկ նրա գործունեության նպատակներն ու բովանդակությունը չունեն ոչ մի օբյեկտիվ հիմք և չեն բխում բնության և հասարակության օրենքներից։

Ազատության և նրա վրա հիմնված գործունեության ըմբռնումը էկզիստենցիալիզմի փիլիսոփայության մեջ չի կրում պատմական, սոցիալական բնույթ, քանի որ ազատությունը չի դիտվում որպես սոցիալական միջավայրի և բնական պայմանների արդյունք։ Ելակետ ունենալով վերացական գոյությունը և անհատական գործունեությունը, նկատի չունենալով օբյեկտիվ օրինաչափությունների ռեալ սիստեմը, որի մեջ ներգրավված է անհատը, որը և վերջին հաշվով պայմանավորում է նրա գործունեությունը, էկզիստենցիալիստներն աղավաղում են մարդու էության լինելիության պրոցեսը, այն չմակաբերելով մարդու և հասարակության բնապատմական զարգացումից։ Մարդու էությունը նրանց մոտ միստիֆիկացված և ներկայացված է որպես ոչ պատմական իրողություն և անհատական կեցություն, իսկ առանձին անհատը հանդես է գալիս որպես մյուս անհատի «ազատության սահմանը»։ Ազատության էկզիստենցիալիստական մեկնաբանման վերջնական արդյունքն իռացիոնալիզմն ու ինդիվիդուալիզմն է։

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ ազատությունը և գործունեությունը պայմանավորված չեն գիտելիքներով, դրանք հանդես են գալիս որպես իռացիոնալ, ապրիորի կառուցվածքի արդյունք, որոնք ոչ թե ճանաչվում, այլ վերապրվում են։ Կ. Յասպերսը գրում է. «...ազատությունը չի

---

[19] Ж. П. Сартр. Экзистенциализм—это гуманизм. М., 1953, стр. 13.

[20] Նույն տեղում, էջ 9։

կարելի արտահայտել գիտելիքի մեջ»[21]։ Մեկ ուրիշ տեղ նա նշում է, որ «մարդու ազատությունը նրա վճռական իրականությունն է, բայց գիտական իմացության համար այն գոյություն չունի»[22]։

Ի տարբերություն էկզիստենցիալիստների՝ ազատության և գործունեության սուբյեկտիվ-իդեալիստական մեկնաբանության, մարքսիստական փիլիսոփայության մեջ այդ կատեգորիաների փոխհարաբերությունը դրվում է իրական հիմքերի վրա և բխեցվում աշխատանքային գործունեությունից։ Հեգելի ծառայություններից մեկը Կ. Մարքսը համարում է այն, որ նա «մարդու ինքնաստեղծումը դիտում է որպես պրոցես, առարկայացումը՝ որպես ապառարկայացում, ինքնաօտարումը և այդ օտարման վերառնումը, նրանում, որ նա ըմբռնում է աշխատանքի էությունը և առարկայական մարդուն դիտում է որպես սեփական աշխատանքի արդյունք»[23]։

Աշխատանքի պրոցեսում, մի կողմից, ձևավորվում է անհատը որպես սոցիալական, գործունյա էակ, իսկ մյուս կողմից՝ հասարակական միջավայրը։ Ահա թե ինչու Կ. Մարքսը ազատությունը բնորոշում է որպես կոնկրետ պատմական սուբյեկտների ինքնաիրականացում՝ աշխատանքային գործունեության պայմաններում։ Հետևաբար, այն ընտրությունը, որ կատարում է անհատը պայմանավորված է կոնկրետ իրադրությամբ։ Նրա ընտրության նպատակը, միջոցները, գործունեության ողջ ուղղությունը մի կողմից պայմանավորված են օբյեկտիվ իրադրությամբ, մյուս կողմից՝ իր սեփական էությամբ։ Ուստի անհատն իր գործունեության ընթացքում պայմանավորված լինելով այդ հնարավորություններով, ինքնորոշվում է, ինքնադետերմինավորվում, քանի որ թեև այդ հնարավորությունները կրում են օբյեկտիվ բնույթ, միաժամանակ դրանք սուբյեկտիվ են, որովհետև դարձել են անհատի հնարավորությունների, նրա նպատակների, պահանջմունքների, շահերի ամբողջությունը։ Այդպիսի ընտրությունը, մի կողմից, չի թողնում, որ ազատությունը վերածվի կամայականության, իսկ մյուս կողմից՝ ցույց է տալիս նրա հասարակական բնույթը։

Ընտրելով իր էությունը, անհատը միաժամանակ ցուցադրում է մարդկային ցեղի իր պատկանելիությունը։ Դա դրսևորվում է նրանում, որ անհատն իր էությունը իրականացնում է ոչ թե կամայականորեն, այլ մարդկանց կողմից ստեղծված առարկայական միջավայրի և հասարակական հարաբերությունների որոշիչ ազդեցությամբ։ Այսպիսով, ազատությունը ոչ թե ինքնուրույն, վերացական կատեգորիա է, այլ մարդու էության դրսևորման միջոց, նրա ակտիվ ստեղծագործական, սոցիալական էության իրականացման եղանակ։ Այս առումով ազատությունը ոչ թե վերացական հասկացություն է, ինչպես պատկերացնում են բուրժուական փիլիսոփաները, այլ սերտորեն կապված է կոնկրետ սոցիալ-պատմական պայմանների հետ, որի կարևորագույն դրսևորումներից մեկը աշխատանքն է, մարդկանց պրակտիկ գործունեությունը, որն, ընթանալով որոշակի պատմական պայմաններում, հանդիսանում է ազատության իրական դրսևորումը։

---

[21] K. Jaspers, Rechenschaft und Ausblick, München, 1951, S. 304.
[22] K. Jaspers, Lebensfragen der deutsche Politik, München, S. 160.
[23] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, стр. 145.

Քննադատելով այն փիլիսոփաներին, որոնք ազատությունը բխեցնում էին մարդկանց կամքից, ցանկություններից և գիտակցությունից, մարքսիզմի կլասիկները նշում էին. «Իսկ իրականում բանն, իհարկե, այնպես է ընթացել, որ մարդիկ ամեն անգամ իրենց համար ազատություն են նվաճել այնքանով, որքանով դա թելադրվել է նրանց և թույլատրվել ոչ թե մարդու մասին նրանց ունեցած իդեալով, այլ գոյություն ունեցող արտադրական ուժերով»[24]։

Այսպիսով, ոչ թե հայեցողական, այլ պրակտիկ ճանապարհով նվաճված ազատությունն է իրական ազատությունը։ Եվ անհատը «ազատ է ոչ թե բացասական ուժի շնորհիվ խուսափելու սրանից կամ նրանից, այլ... դրական ուժի՝ դրսևորելու իր իսկական անհատականությունը»[25]։ Ազատության պրոցեսն այսպիսով անմիջականորեն կապված է մարդկային ուժերի զարգացման հետ, այսինքն՝ մարդու ցեղային էության այն պատմական մոդիֆիկացիաների հետ, որոնցում ամրապնդվում է անհատի աստիճանական զարգացումը։

Ազատության և գործունեության փոխհարաբերությունը հիմնված լինելով կոնկրետ պատմական պայմանների վրա, կարող է մարդու էության դրսևորման իսկական ուղիներ հանդիսանալ միայն սոցիալիզմի պայմաններում, քանի որ սոցիալիզմը «... մարդկության թռիչքն է անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորությունը»[26]։ Հետևաբար միայն սոցիալիզմի ժամանակ է, որ մարդկանց վրա գերիշխող սոցիալական ուժերն ընկնում են նրանց հսկողության տակ, լայն ասպարեզ բացելով մարդու բազմակողմանի զարգացման և իսկական ազատության իրականացման համար։

Բնութագրելով սոցիալիզմի՝ որպես իրական ազատության հասարակության առավելությունները, Լ. Ի. Բրեժնևը XXV համագումարում տված հաշվետու զեկուցման մեջ ասաց. «Սոցիալիզմն արդեն այսօր հսկայական ներդրում է ունենում աշխարհի միլիոնավոր մարդկանց մտքերի և զգացմունքների վրա։ Նա աշխատավոր մարդկանց համար ապահովում է ազատություն, իսկական դեմոկրատական իրավունքներ, բարեկեցություն, գիտելիքներին տիրապետելու ամենալայն հնարավորություն, ապագայի հաստատ վստահություն»[27]։

СООТНОШЕНИЕ СВОБОДЫ И ДЕЯТЕЛЬНОСТИ В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ ИНДИВИДА

ГЕНРИХ АКОПЯН

Резюме

Деятельно преобразуя внешний мир, создавая «вторую природу», человек одновременно формирует и самого себя. Воспринимая воздействия объективной действительности, он в свою очередь преобразует их в способы самовыражения, самореализации.

---

24 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 433.

25 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, стр. 145.

26 Ֆ. Էնգելս. Անտի-Դյուրինգ, էջ 381։

27 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 14։

Процесс преобразования внешнего мира — вовсе не безразличный, нейтральный, *а избирательный, заинтересованный, целенаправленный* процесс, где человек осуществляет свою сознательную цель. Такая целенаправленная деятельность, составляющая подлинную сущность человека, невозможна без определенной свободы от внешних условий и естественной необходимости. С этой точки зрения человеческие действия, с одной стороны, рецептивны по отношению к обстоятельствам, с другой, в этих действиях человек свободно полагает самого себя.